Հավելված N 1
ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով գնման
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի
2025թ. ապրիլի 17-ի N2 արձանագրության

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 17-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03

«Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 16.04.2025թ. ժամը 19:10-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 17.04.2025թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N1: ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով մրցույթի 2-րդ չափաբաժնում Մանրադիտակ տրինոկուլյար՝ տեսախցիկի համար տեխնիակկան բնութագրում նշված է սարքի լուսավորման աղբյուր է հանդիսանում 6V/20W հալոգենային լամպը: Խնդրում ենք տալ պարզաբանում հետևյալ հարցին՝ արդյոք հալոգենային լամպին համարժեք կարող է դիտարկվել նույն 6V/20W լույսի աղբյուր ունեցող S-LED լամպը:

Պարզաբանում N1: Հարգելի մասնակից, տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ, և այո, նման չափորոշիչներով մանրադիտակի լույսի աղբյունը S-LED լամպն է: Տվյալ չափաբաժնի մասով կկատարավի փոփոխություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԿՀԳԿ-ԳՀԱՊՁԲ-25/03 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ